

«ԴՐՈՇԱԿ» ԹԵՐԹԻ ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆԸ
(1899 – 1908 թթ.)

ԱՐՈՒՍՅԱԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հայտնի է, որ գրականությունը ծնվում և սնվում է ազգերի պատմությունից ու իր զարգացման ընթացքում դառնում է ժողովրդի ապրած կյանքի արտացոլանքը, ներաշխարհի անտես փոփոխությունների արձագանքը¹: Իսկ ինչպիսի՞ն էր XIX դարավերջին ժողովրդական կյանքի պատկերը, որից պիտի սնվեր հայ գրականությունը: Աբդուլ Համիդի տիրապետչակ իշխանության տարիներին Արևմտյան Հայաստանում տեղի են ունենում պատմաքաղաքական դրամայի ամենատխուր դրվագները: 1894–1896 թթ. ջարդերին ուղղակիորեն հաջորդում են քաղաքական ելույթներն ու ցույցերը՝ որպես առաջին դրսևորումները ցամառն, ընդվզումի: Ազատագրական պայքարի պտոթկումը ստեղծված իրավիճակի բնական ընթացքն էր, երևույթի օբյեկտիվ դրսևորումը: Եթե «ազատությունը մարդու ընդաբույս բնագոյուն է»², ուրեմն անհրաժեշտություն է բողոքն ու ընդվզումը բռնության դեմ: Խնդիրը միայն այդ անհրաժեշտությունը գործողության մեջ դնելն է: Գրականագետ Ս. Սարինյանը նշում է, որ ազատությունը վերուստ շնորհվող պարզն չէ, այլ պայքարի ու մաքառման դաժան ասպարեզ³: Իսկ Բաֆֆին ժամանակ առաջ հստակ պատկերացում ուներ ազատագրական պայքարում հաջողության հասնելու ուղիների մասին. «...պետք է սկսել մի հիմնավոր գործ, և փոխանակ ցրվելու, մասնավորեցնելու ուժերը, հավաքել, կենտրոնացնել նրանց մի ամբողջության մեջ և խմբովին գործել»⁴:

Այդ մտքի հրամայականով էլ պայմանավորվեց Հայ հեղափոխական դաշնակցության գործունեությունը, որն իր քաղաքական-գաղափարական քարոզչությունն իրականացնելու նպատակով կարևորեց կուսակցության օրգան «Դրոշակ»⁵ պաշտոնաթերթի դերը: Մ. Վարանդյանը վկայում է, որ դաշնակ-

¹ Հր. Թ ա մ ր ա զ յ ա ն. Բանաստեղծության հազարամյա խորհուրդը, Երևան, 1986, էջ 178:

² Ս. Ս ա ր ի ն յ ա ն. Հայ գաղափարաբանություն, Երևան, 1998, էջ 54:

³ Նույն տեղում, էջ 55:

⁴ Բ ա ֆ ֆ ի. Երկերի ժողովածու, հ. 11, Երևան, 1991, էջ 303:

⁵ 1890 թ. Թիֆլիսում հիմնադրվեց Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը, 1891 թ.՝ «Դրոշակ» պաշտոնաթերթը, որը 1891 – 1892 թթ. հրատարակվել է Թիֆլիս, 1892–1893 թթ.՝ Կոստանցա (Ռումինիա), 1893 – 1914 թթ.՝ Մին (Շվեյցարիա) քաղաքներում (տե՛ս Հուշամատյան Հայ Հեղափոխական Դաշնակցության, հ. Ա, Կալիֆորնիա, 1992, էջ 211):

ցության պարագլուխներից Ք. Միքայելյանի ջերմեռանդ գործունեության շնորհիվ բեղմնավոր եղավ «Դրոշակի» ժնկյան շրջանը (1898–1904 թթ.): Կարճ ժամանակում նա պատշաճ բարձրության վրա դրեց այն՝ իր շուրջը համախմբելով «հրապարակագիրներու և գրողներու հույլ մը (Է. Ակնունի, Ավ. Ահարոնյան, Ավ. Բսահակյան, Սիամանթո – Ա. Ա.)»: Ք. Միքայելյանը քաջ գիտակցում էր, որ գեղարվեստական խոսքի, գրական նյութի առկայությունը թերթում կապահովեր գաղափարական պայթույթ, որը ոչ միայն կնպաստեր թերթի տարածմանը, այլև իսկապես կհուզեր ընթերցողին. «Հարկ էր միանգամայն ուժեղացնել կուսակցության պաշտոնաթերթը, ուժ տալ հեղափոխական գրականության և խտացնել գաղափարային շարքերը թե՛ արևմտահայ գաղութներու և թե՛ ուսանող երիտասարդության մեջ»⁶: Ավ. Ահարոնյանը ևս փաստում է, որ Ժնևում Քրիստափորի մտահոգության առարկան «Դրոշակն» էր⁷: Հայրենասեր մտավորականը հոգատար վերաբերմունք ուներ հատկապես նոր երիտասարդ ուժերի նկատմամբ: Ինքն էլ հաճախ ներշնչել է, ուղղորդել նրանց, ստեղծագործական լիցքեր հաղորդել: Իր ուսուցչի մասին Ահարոնյանը հիացմունքով է խոսում և հպարտանում, որ «Թերթոն» գրական բաժնի պատասխանատվությունը Քրիստափորը հանձնել է իրեն⁸: Նրա թելադրանքով էլ գրում է «Ազատության ճանապարհին» (տպագրվում է 1899–1905 թթ., Ժնևում՝ Ղարիբ ծածկանվամբ) պատմվածաշարը, որը ժամանակի ողբերգական դեպքերի ուղղակի վերապատմումն է: Երկրում ծավալվող ֆիդայական պայքարը և՛ ներշնչման աղբյուր էր, և՛ հսկայական նյութ ստեղծագործ մտքի համար, բայց, ցավոք, այն չկարողացավ ջնջել ողբերգականության կնիքը: Դրանից չձերբազատվեց և Ահարոնյանը, չնայած որ ամբողջովին համակված էր ազատագրական պայքարի գաղափարով: Նա արդեն առաջին՝ «Խայր», պատմվածքում ստեղծում է վրիժառու հայի կերպարը, ով հաստատապես գիտակցում էր, թե ինչու է զենք վերցրել ու կռվի էլել: Խայր հավատացած էր, որ մարդն ինքն է որոշում իր ճակատագիրը: Նա անզեն հաղթել էր ոտքից գլուխ զինված քրդին, որովհետև հավատացել էր իրեն, ոչ թե պարտադրվող ճակատագրին. «...ու ինքը, որ զոհ ըլլալու կոչված էր, կ'լլա իր իսկ ճակատագրին տերը»⁹: Ինչպես տեսնում ենք, ուրվագծվում է մի գաղափար, որն արդեն իսկ համոզմունք էր դարձել լեռներում ծվարած արիասիրտ քաջագունների՝ ֆիդայիների համար: Այդպես էլ պատմվածաշարի հերոսները՝ այր թե կին, ծեր թե երիտասարդ, մանուկ թե պատանի, մեկը մյուսի հետևից, ցասումից ու վրեժից մոլեգնած, հրացանն ուսներն էին գցում, սարերը

⁶ Մ. Վ ա ր ա ն ղ յ ա ն. ՀՅ Դաշնակցության պատմություն, Երևան, 1992, էջ 167:

⁷ Ա վ. Ա հ ա ր ո ն յ ա ն. Քրիստափոր Միքայելյան, Բոստոն, 1926, էջ 105:

⁸ Ա վ. Ա հ ա ր ո ն յ ա ն. Երկերի ժողովածու, հ. 5, Բոստոն, 1948, էջ 332:

⁹ Հոբելյան Ավետիս Ահարոնյանի 40-ամյա գրական գործունեության. 1890 – 1930, Նյու Յորք, 1930, էջ 37:

ելնում՝ հայրենի տունն ու ընտանիքը պաշտպանելու: Իրար հաջորդող պատմությունները զարհուրանքի սարսափելի տեսարաններ են, արյունոտ պատկերներ, վախի ու դավաճանության ոճիրներ, սխրանքների ու նահատակության սրտահույզ նկարագրություններ («Պատիվը», «Էլ մի՛ աղոթիր», «Մայրը», «Արյունոտ թթիմոր», «Ջավոն», «Աշուղը», «Տիրացու Գրիգորը» և այլն): Վկայակոչելով ֆիդայական պայքարի հերոսներին՝ Ահարոնյանը հաճախ պատմվածքներն ընծայագրում է այսպես. «Ուխտավորը»՝ Պետոյի ու իր խմբի հիշատակին, «Վագրիկ»՝ Դումանին, «Օտար հորիզոնի տակ»՝ անգուգական Քրիստափորին, «Հագրեն»՝ «Մարերի ապան» Անդրանիկին: Ավա՛ղ, նրա հերոսները նահատակներ էին: Ու քանի որ սեփական գոյությունը լեռնեցու հարուստ կենսափորձի իմաստությամբ պահող ժողովուրդը չունենա առաջնորդ, նրա ընդվզումն էլ տարերային էր, հաճախ ողբերգական ավարտով, որին հետևում էր համակերպության ախտը: Նկատելի է, որ գրողը «...խիստ սուր է զգում «զուլումի» անտերունչ զոհերի ցավը և անընդհատ յուր կսկիծը, յուր վերաբերմունքն արտահայտում»¹⁰, և, թերևս, այդ պատճառով էլ տարվում է նատուրալիստական նկարագրություններով, որոնք խորացնում են վշտի զգացողությունը, հաճախ հեռացնում «գեղարվեստական իդեալից»¹¹: Բայց և չմոռանանք, որ «Ազատության ճանապարհին» շարքը, այնուամենայնիվ, պատմվածքի ժանրում նորություն էր թե՛ թեմատիկայով, թե՛ գաղափարական ու գեղարվեստական առանձնահատկություններով¹²:

Կարծում ենք, ֆիդայական պայքարի պատմությունը որքան վիպական, նույնքան էլ բանաստեղծական է: Այդ իմաստով ինքնաբերիկ էր և անմիջական Ավ. Բասիակյանի «Հայդուկի երգերից» շարքը, որը Հայ-գուսան ծածկանվամբ տպագրվում է 1900–1904 թթ. «Դրոշակում»: Գրականագետ Ս. Արզումանյանը նշում է, որ բանաստեղծի հետաքրքրությունը ֆիդայական պայքարի հանդեպ եղել է տևական և խորը¹³, և բնական է, որ Բասիակյանն էլ դառնար հայդուկային պայքարի երգիչը: Շարքի բանաստեղծություններն ամբողջությամբ ներկայացնում են հայդուկին ու նրա կյանքը: Մի դեպքում դրանք հայրենիքի հանդեպ սիրով ու կարոտով լցված հայդուկի խոհերն ու հույզերն են («Հագար բարով...», «Ինձ տեղ տվեք...», «Սուրբ հայրենիքս...»), մյուս դեպքում դրամատիզմով հազեցած դրվագներ են ֆիդայական ազատամարտի հերոսական պատմությունից («Երբ ես մեծցա...», «Մայնո ձորերում...», «Վեհ ազատության...», «Ճամփեսա արունի հետք թողեր, կերթա...»): Հայրենիքի չքնաղ պատկերի՝ բարձրաբերձ լեռ-

¹⁰ Յ. Խ ա ն գ ա ղ յ ա ն. Ավ. Ահարոնյան, Երևան, 1926, էջ 33:

¹¹ Նույն տեղում, էջ 15:

¹² Գ. Խ ա չ ա տ ը յ ա ն. Գրական առնչություններ և արժևորումներ. – Գիտական աշխատություններ, XVII, Գյումրի, 2014, էջ 181:

¹³ Ս. Արզումանյան. Բանաստեղծության ազգային հողը, Երևան, 1998, էջ 334:

ների ու կանաչագարդ ձորակների գեղեցկությանը բանաստեղծը հակադրում է անկատար իրականությունը, որտեղ մահվան են դատապարտված մարդկային վեհ զգացմունքները: Հայրենիքի ծայրահեղ ծանր վիճակը և անորոշ քաղաքական բախտը հոռետեսության են մղում Բսահակյանին, ցավի ու արտասանքի շեշտեր հաղորդում բանաստեղծի խոհերին, բայց հայրենիքի հանդեպ անսահման սերը ստիպում էր նրան երբեք չհրաժարվել իր երազներից: Ինչպես՝ «Հայրուկը հոգում երազ է տեսնում // Հայրենի աշխարհն ազա՛տ, ապահո՛վ...»¹⁴: Բսահակյանը փափագում էր, որ իր ժողովուրդն էլ հնագույն քաղաքակիրթ ժողովուրդներին հավասարի իրավունքով գնար մարդկության մեծ ճանապարհով, միայն թե նրան համախմբող, ոգեշնչող ուժ էր հարկավոր: Բանաստեղծի համոզմամբ հուսակոտոր ժողովրդին ապրելու տենչ ու կամք կարող էին պարզել միայն հերոսները՝ «հրեղեն գործողները», ովքեր մարդկային առաքինություններով օժտված անհատներ էին, գաղափարի զինվորներ: Այդպիսիք էին նահատակված հերոս-ֆիդայիները, որոնց նկատմամբ սիրո և ակնածանքի վառ օրինակներ են «Գուրգենի անմահ հիշատակին», «Ավետիք Մալոյանի հիշատակին», «Սերոբի հիշատակին» ներբողյանները: Հերոսների գործի և նրանց կերպարի վերհուշով կարծես բանաստեղծը լցնում էր ունայնությունը, միաժամանակ ապրելու ու պայքարելու հույսեր արթնացնում: Նորօրյա հերոսները ներշնչանքի աղբյուր էին հանդիսանում ոչ միայն Բսահակյանի, այլև տակավին երիտասարդ Միամանթոյի (Ատոմ Յարճանյան) համար: Մեջբերենք Ս. Մարինյանի բնորոշումը, որ «...բանաստեղծությունը, ինչպես և վեպը, պետք է համապատասխանի ժողովրդի գաղափարներին ու զգացմունքներին և կառուցված լինի այնպես, որ պահպանի նաև ներդաշնակությունը, կենդանությունը, տիպերը և հետաքրքրականությունը»¹⁵: Նշված առանձնահատկություններից էլնելով՝ ասենք, որ Միամանթոյի «Հայրդիներ» շարքն (1903–1905 թթ., Ժնն) իր ինքնատիպությամբ առանձնահատուկ հմայք հաղորդեց «Դրոշակի» գրական էջին: Բանաստեղծն ստեղծում է մտահղացման, ձևի, բովանդակության ու գաղափարի ներդաշնակությամբ կատարյալ հյուսվածք: Որքան նոր ու փոթորկուն էր բանաստեղծի քնարը, նույնքան հզոր ու հուժկու էին նրա հերոսները: Ինչպես Վարուժանն է նկատում՝ «Հին դուրսագները աշխարհակալներ էին կամ ասպետներ, նորերը՝ Յարճանյանի հերոսները, հեղափոխականներ են կամ առաքյալներ»¹⁶: Նրանք կրում էին Վրեժի, Ատելության, Ռճիրների, Մահի ու Մարսափի, Ազատության, Եղբայրության, Պայքարի ու Հաղթանակի մարմնացյալ գաղափարները և պատրաստ էին սրով կյանքի կոչել դրանք: Խոհերի ու

¹⁴ «Դրոշակ», 1900, -7, էջ 100:

¹⁵ Ս. Մ ա ռ ի ն յ ա ն. □Վերք Հայաստանի□ վեպի պոետիկան. – ՊԲՀ, 2001, -2, էջ 79:

¹⁶ Դ. Վ ա ռ ո ժ ա ն. Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Երևան, 1987, էջ 159:

հույզերի հզոր պոռթկումներ են «Փառք ահաբեկիչներուն», «Դարերու վրեժը», «Թիարաններուն խորերեն», «Կախադաններու կատարեն» քերթվածները: Միամանթոն «Ոսկեդեն դարագլուխ» է անվանում շղթաները փշրտելու ժամանակը («Կովկաս»), քաջալերում, պայքարի է կոչում անգամ «մահվան արգանդեն» ծնված որբերին («Որբերու ճակատագրեն»)՝ վաղվան Հայորդիներին, հանուն «Կյանքին համար, յոյսին համար, արգասաբեր հողին և մայրական Հաստանին համար»¹⁷: Նրա Հայորդիները, անկասկած, ազգային-ազատագրական պայքարի բարձր գիտակցությունն ունեին՝ համոզված, որ «Միայն գաղափարն է, որ ո՛չ մահ ունի, ո՛չ դատավոր, ո՛չ գերեզման...»¹⁸: Միամանթոյին զարմանալիորեն հաջողվել է բանականն ու զգացականը հաշտեցնել, ուղղորդել դեպի ճշմարիտ գաղափարը: Նրա քերթվածների լավատեսական հզոր շեշտերը իսկապես որ համատարած ողբից վիատ ընթերցողին ցնծության պահեր էին պարզում, փարատում հուսահատության ու լքումի մղձավանջը:

Որպես պաշտոնաթերթ՝ «Դրոշակի» գրական էջը չէր կարող սահմանափակվել միայն ճանաչված գրողների ստեղծագործությունների հրատարակմամբ: Դրականորեն այն բազմաժանր էր և բազմաբովանդակ՝ զանազան քննարկումներ, քաղաքական, սոցիալական բնույթի վերլուծություններ, տեսություններ, ինչպես նաև ճանաչված դաշնակցական որոշ գործիչներ հանդես են եկել գրական տարբեր ժանրերում: Անդրադառնանք դրանցից մի քանիսին: 1902–1907 թթ. թերթի էջերում տպագրվում են Արամ Չարրզի (Չարրզճյան)¹⁹ ստեղծագործություններից՝ Վտարանդի ծածկանվամբ: Կարող ենք ասել, որ դրանք զգալիորեն առնչակից էին Միամանթոյի վերոհիշյալ բանաստեղծություններին թե՛ թեմատիկ-գաղափարական և թե՛ գեղարվեստական համակարգի առանձնահատկություններով: Վտարանդի բանաստեղծը ևս շատերի նման ընդվզում է Տիրոջ դեմ՝ փնտրելով Ազատության, Իրավունքի և Միրո երրորդությունը: Մուգի, Արյունի ու Չարչարանքի գիշերներից հետո հոգեվարքի լլկումներից ուժասպառ՝ կառչում է Ատելությունից և ձայնում Կոչնակներուն՝ ասելով. «Անոնք վաղորդայնի մեր ազատության Ատրուշանին անբասիր Քուրմերը պիտի դառնան Բովանդակ Ապառնիներու համար»²⁰: Կարծում ենք այս միտքն ամբողջական պատկերացում է տալիս Արամ Չարրզի գեղագիտական իդեալի մասին: Նա փորձում է հեթանոսական փառավոր անցյալի փիլիսոփայական վերացարկումներում («Բողոք», «Հերոսները», «Ատելությունը», «Կոչնակները») բացահայտել ժամանակի ոգին, արտահայտել հանրությանը համակած

¹⁷ «Դրոշակ», 1907, - 2, էջ 27:

¹⁸ «Դրոշակ», 1906, - 11, էջ 171:

¹⁹ Չարրզ Արամ, Վտարանդի (1874 – 1947) – հայ բանաստեղծ, մանկավարժ, թարգմանիչ (տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հ. 8, Երևան, 1982, էջ 673):

²⁰ «Դրոշակ», 1904, - 1, էջ 7:

տրամադրությունները, ուրվագծել հայրենիքի փրկության ուղիները: Ժողովրդական բանավեպստին բնորոշ էպիկական շնչի ստեղծագործություն է «Վիդոշի բազեն» (հատված նույնանուն պոեմից), որը գրվել է Քրիստափորի և Էդուարդի մահվան տարելիցի առթիվ: Նախորդի տրամաբանական շարունակությունն է «Դաշնակցության» բանաստեղծությունը, որտեղ հեղինակն ակնհայտորեն իր հիացումն ու համակրանքն է հայտնում կուսակցության հանդեպ՝ այն համարելով՝ «Վեմ հայրենի ազատութեան Խորանին»²¹: «Ձեզի է, որ կղիմեմ», – գրում է բանաստեղծը երկրի ժողովրդին, – չլինի՞ թե, կոտորածների սարսափներից զարհուրած, երկնչեն, «Ուստի, չ'ըլլա, որ հայր կամ մայր մը իր զավկին բարձրացող բազուկը բռնել փորձուի... Ձեզի է, որ կղիմեմ ապառնին վերադարձող զինեալ հոգիովս ֆեդայիի...»²²: Ընդգծենք, որ ապառնին Չարրզի բանաստեղծական համակարգում ներկայանում է որպես սպասված հաղթանակի ժամանակը: «Մենք պիտի հաղթենք» բանաստեղծության մեջ նա դիմում է Սուլթան Համիդին՝ այդ բովանդակ սերնդի գերեզմանափորին, և հիշեցնում, որ հայ ժողովուրդը մահվանից չի վախենում, որ «Մենք մեր գերեզմաններուն մեջեն կը շարունակենք ապրիլ»²³ ու գնալ դեպի հաղթանակը: «Դրոշակի» 1906 թ. - 4, 5, 6-ում տպագրվում են Միքայել Տեր-Մարտիրոսյանի (Մար)²⁴ «Կենդանի թաղվածների աշխարհում» բանտային հուշերը: Նախկին բանտարկյալ Մարը խորը վերլուծական հետազոտություն է կատարում՝ ընթերցողին պարզելով այն «բարոյական դժոխքը», որ «թուրքական բանտ» է կոչվում: Բռնակալական եզակի հալածանքներով հռչակված երկրում, ուր կատարվում են աշխարհի և ոչ մի անկյունում չտեսնված ու չսված ոճիրներ, դժվար չէ պատկերացնել, թե ինչ ստորացման և դաժանության պիտի ենթարկված լինի բանտարկյալը: Հայր, իբրև քաղաքական հանցավոր, թուրքական բանտերում սկսեց երևալ 1870-ական թվականների վերջերին Էրզրումում: Մարը գրում է. «Ամբողջ Թուրքիայում կոտորածների միջոցին ձերբակալված հայերի թիվը հասնում էր 25000-ի»²⁵: Նրանցից քչերն էին մնում կենդանի, այն էլ՝ կիսամեռ վիճակում: Հեղինակը նկարագրում է այն անասելի տանջանքներն ու կտտանքները, որոնց ենթարկվում էին հայ բանտարկյալները, այսպես կոչված, քննությունների ընթացքում, առանձնահատուկ էր խստությունը հատկապես հեղափոխականների նկատմամբ: Նա միաժամանակ խիզախության կոչ է անում՝ իր բախտակից ընկերներին հիշեցնելով իրենց առաքելությունը. «Գաղտնապահություն մինչև վերջին

²¹ «Դրոշակ», 1906, - 12, էջ 188:

²² «Դրոշակ», 1907, - 4, էջ 62:

²³ «Դրոշակ», 1907, - 6-7, էջ 102:

²⁴ Մար (Միքայել Տեր-Մարտիրոսյան, (1875–1931) – դաշնակցական գործիչ (տե՛ս Հուշամատյան Հայ Հեղափոխական Դաշնակցության, էջ 83):

²⁵ «Դրոշակ», 1906, - 5, մաս II, էջ 78:

շունչ և ոչ երբեք խոստովանություն: Այս պիտի լինի նշանաբանը բոլոր քաղաքական կալանավորների, հավատամքը ամեն մի հեղափոխական ձերբակալվածի»²⁶: Իր «Ողջուն» հռետորական խոսքով հուսադրում է նրանց՝ ասելով. «Դուք ուժեղ եք ձեր կամքով, ձեր գաղափարով և ձեր մեռնող ընկերոջ կտակով»²⁷:

Նկատելի է, որ «Դրոշակի» խմբագրությունը նպատակային, հետևողական վերաբերմունք է ցուցաբերել տպագրվող նյութերի ընտրության հարցում: Անգամ օտար հեղինակների ստեղծագործություններից ներկայացված թարգմանությունները թերթում գաղափարապես ոչ միայն առնչակից են առաջադրվող նյութին, այլև որպես համամարդկային արժեքների արտահայտություն հարազատ են հայ իրականությանը: Բնչպես՝ իտալացի սոցիալիստ-հեղափոխական Ամիլյար Չիպրիանիի «Կիցո»²⁸, ֆրանսիացի վիպագիր Պրոսպեր Մերիմեի «Մաթեո Ֆալկոնե»²⁹ ստեղծագործությունները: Չիպրիանին հերոս է անվանում Կիցոյին, ով ծնվել էր հրամանատարության համար, սակայն դարձել էր ավագակապետ: Անհավասար մարտում Կիցոն սպանվել էր՝ փրկելով շատերի կյանքը: Ժողովուրդների ազատության համար պայքարող կամավորական Չիպրիանին Կիցոյի կերպարի միջոցով ընդհանրացնում է պայքարի անհրաժեշտության և հերոսականության գաղափարները՝ ասելով. «Հեղափոխության հատկություններից մեկն է դուրս բերել ամբոխի միջից հերոսներ, որոնք կոչվում և մեռնում են գաղափարի համար»³⁰: Այդպես էլ Մերիմեի հերոսը՝ Մաթեո Ֆալկոնեն, «նույնչափ լավ ընկեր է, որչափ և վտանգավոր թշնամի»: Նա ողորմած էր շատերի հանդեպ, բայց ոչ թշնամու, առավել ևս, մատնիչի: Գուցե ծայրահեղ թվա, բայց սառնասրտորեն սպանել էր իր մինուճար որդուն, ով հայտնել էր թշնամուն իրենց ազարակում պատսպարված վիրավոր զինվորի տեղը: Ֆալկոնեն հավատացած էր, որ արդարություն էր գործել: Նրա համոզմամբ զինվորի համար պատիվը հայրենիքին ազնվորեն ծառայելն էր: Չերկնչել, չվարանել ու հանուն գերագույն գաղափարի պատրաստ լինել անգամ անհնարինը հնարավոր դարձնելուն. սա էր հերոսի կենսափիլիսոփայությունը: Նույն երևույթի այլաբանական դրսևորումներն են Գորկու «Մրրկահավի երգը» (առաջին անգամ հայ իրականության մեջ թարգմանել է Ավ. Իսահակյանը. հրատարակել է «Դրոշակը» Ժնևում 1901 թ. արևմտահայերեն «Մրրկահավը» վերնագրով)³¹, «Կյանքի

²⁶ «Դրոշակ», 1906, - 6, մաս III, էջ 94:

²⁷ «Դրոշակ», 1908, - 8, էջ 121:

²⁸ «Դրոշակ», 1899, - 9, էջ 142:

²⁹ «Դրոշակ», 1900, - 5, էջ 77:

³⁰ «Դրոշակ», 1899, - 9, էջ 142:

³¹ Ավիկ Իսահակյան. Ավետիք Իսահակյանը և ռուս գրականությունը, Երևան, 1984, էջ 421:

դիմաց» (1901 թ.), «Խորտակված կապանքներ» (1903 թ.) խոհափիլիսոփայական պատկերները: Գրողը ստեղծում է ազատության մարտիկի խորհրդանշական կերպարը՝ բարկաճայթ ծովի վրա, կայծակների մեջ ազատ ու համարձակ թնապարող խիզախ մրրկահավը, պատնեշները կործանող կատաղի ծովը: Գորկու հերոսները ևս, մտապատկերում ազատության իդեալն ունենալով, հավատացած էին՝ հեղափոխող ուժ են դառնալու համախմբվելու դեպքում:

Ինչպես տեսնում ենք, թերթի էջերում գրականությունը քայլում էր ժամանակին համընթաց: Վերջինիս չէր զիջում նաև գրական-հրապարակախոսական ժանրը: Նշանակալից էին հատկապես Ք. Միքայելյանի (Էլլեն, Թոփալ, Էդուարդ), Է. Ակունու (Խաչատուր Մալումյան), Ս. Ջավարյանի աշխատությունները: Ս. Վարանդյանի վկայությամբ՝ Քրիստափորը բերում է իր հեղինակավոր աշխատակցության բաժինը՝ տպագրելով «Ամբոխային տրամաբանություն» (1899–1900 թթ.)³² հոդվածաշարը, որը կոչված էր համատարած ռեակցիայի դեմ պայքարելու, գեթ մասամբ լքումի մղձավանջը փարատելու և բարձրացնելու հայության ընկճված տրամադրությունները³³: Քրիստափորին մտահոգում էր, թե ինչ լուծում պիտի ունենար Հայկական հարցը: Նշենք, որ Եվրոպայում Հայ դատի քարոզչության կազմակերպումն իրականացնելու նպատակով նա Փարիզում հիմնադրում է «Պրո Արմենիան» (“Pro Armenian”) երկշաբաթաթերթը՝ այս անգամ նրա շուրջը հավաքելով ֆրանսիական մտավորականության ընտրանին. «Խոշոր անուններ զարդարեցին անոր ճակատը՝ Ժորես, Պրեսանսե, Կլեմանսո, Անատոլ Ֆրանս, խմբագրապետ՝ Պիեռ Քիյառ»³⁴: «Դրոշակի» խմբագրությունը ծանուցում է ներկայացնում «Պրո Արմենիայի» գործունեության մասին՝ հայտնելով, որ «Թերթոն» բաժինը պարբերաբար անդրադառնալու է աչքի ընկնող հրապարակումներին՝ նպատակ ունենալով հայ հասարակության զանազան խավերին տեղյակ պահել Եվրոպայում մեզ համակիր հայտնի գրողների, հասարակական-քաղաքական գործիչների մտքերին, պաշտպանողական խոսքին³⁵: Հետաքրքրական են Ժ. Կլեմանսոյի «Արյունաշաղախ ձեռքը», Պիեռ Քիառի տեսությունից և Պրեսանսեի «Ցարը և հայերը» հոդվածից հատվածները: Ընդ որում, հայոց ճակատագրի շուրջ խորհրդածությունների, վերլուծությունների արդյունքում նրանց հայացքները գրեթե նույնանում էին. ասենք՝ «Իսկապես սուլթանի և ցարի մեջ– սատանայի և խոր ծովի մեջ– հայերը կարող են հուսալ միմիայն իրենց, իրենց կազմակերպության, իրենց հոգնաշխատ ջանքերի և համայն աշխարհի մեջ արդարության և Հեղափոխության կուսակիցնե-

³² «Դրոշակ», 1899, -5, 6, 8, 1900, -2, 4:

³³ Ս. Վ ա Ր ա ն դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 168:

³⁴ Նույն տեղում, էջ 170:

³⁵ «Դրոշակ», 1900, -9, մաս I, էջ 142:

րի համակրության վրա»³⁶ և այլն: Նրանք փորձում էին այդ կերպ եվրոպական դիվանագիտության ուշադրությունը հրավիրել թուրքական բռնապետության վարած հայահալած քաղաքականության վրա: Ք. Միքայելյանի և Ս. Չավարյանի համահեղինակությամբ հաստիքաբար տպագրվում է «Այբ ու բեն» հոդվածը (1893–1894 թթ.)³⁷: Ելնելով ընդհանուր գործի շահերից՝ նրանք քննդատական խոսք էին ուղղում ժամանակի հեղափոխական այն գործիչներին, ովքեր չէին ընդունում հեղափոխության «այբ ու բենը»: Մինչդեռ «նրա ընդունելը կլիներ ամենանպաստավոր միջոց մեր երկրի հեղափոխական ձգտումները մի ընդհանուր լեզվով և ոգով արտահայտելու համար»³⁸: Չընկալված պարզագույն ճշմարտություններն ուսուցանելու դժվարին գործն էին ստանձնել դրոշակյանները: Նրանց մեջ առանձնահատուկ էր Խաչատուր Մալումյանը: Քրիստափորի դրդմամբ նա աշխատակցում է «Դրոշակին», տպագրում «Կովկասյան խաբրիկներ» շարքը (1899–1904 թթ.)՝ Ակնունի ստորագրությամբ: Դրանք շուրջ 29 նամակներ են, բողոքի ու ցասման պոռթկումներ, որոնք ներկայացնում էին ցարական ռեժիմի հայահալած քաղաքականությունը, պարզաբանում Կովկասում տիրող թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական իրավիճակը: Որպես «ուժեղ հրապարակագիր և պերճախոս հոետոր»³⁹՝ նա իր արտաստվոր հմայիչ խոսքով կովկասյան ժողովուրդներին հավասարության և եղբայրության կոչ էր հղում, ցույց տալիս ազատությունը ձեռք բերելու միակ ճշմարիտ ճանապարհը: Ակնունին շարունակում է Ըաֆֆու մտքերը՝ համոզված, որ «...համերաշխության մեջ է թշնամու անկման ամենագորեղ գրավականը»⁴⁰: Եվ՝ Քրիստափորը, և՛ Ակնունին ազգային գաղափարախոսության ջատագովներն են եղել և անմնացորդ ծառայել են հայրենիքին ու ժողովրդին՝ դառնալով գաղափարի նահատակներ: Այս համառոտ ակնարկն անգամ փաստում է, որ թե՛ զեղարվեստական, թե՛ հրապարակախոսական բոլոր գործերն էլ (տպագրված «Թերթոն» գրական բաժնում) նպաստում էին ազգային ինքնագիտակցության բարձրացմանը և արժևորվում են պատմականության տեսակետից, դրանք զեղարվեստական ստեղծագործություններ լինելուց զատ հայ ժողովրդի պատմության մի կարևոր հատվածի մասին պատմող վավերագրեր են:

Ներկայացված նյութը վկայում է, որ «Դրոշակի» գրական բաժինը 1899–1908 թթ. կայացել և ամբողջովին իրականացրել է իր առաքելությունը: Պահպանելով ժամանակի զգացողությունը, պատմական իրադարձություններն ունենալով

³⁶ «Դրոշակ», 1900, - 9, մաս III, էջ 144:

³⁷ «Դրոշակ», 1893, - 5 (առաջնորդող), 1894, - 6 (առաջնորդող), -7, էջ 7, -8, էջ 6:

³⁸ «Դրոշակ», 1893, - 5 (առաջնորդող):

³⁹ Հր. Տ ա ս և ա պ ե տ յ ա ն. ՀՅ Դաշնակցությունը իր կազմութենե մինչև Ժ ընդհանուր ժողովը, Աթենք, 1988, էջ 224:

⁴⁰ Է. Ա կ ն ու ի. Կովկասյան վերքեր, Ժնև, 1903, էջ 367:

որպես նյութական-բովանդակային հենք՝ այն ձգտել է ճշմարտացիորեն արտացոլել իրականությունը, բացահայտել ժողովրդի հոգեկերտվածքի ինքնատիպությունը և, իհարկե, դժվար ժամանակներում բարձր պահել ազգային ոգին:

ЛИТЕРАТУРНЫЙ РАЗДЕЛ ГАЗЕТЫ «ДРОШАК»
(1899–1908 гг.)

АРУСЯК АБРААМЯН

Резюме

С 1894 года в литературном разделе («Тертон») официальной газеты АРФД «Дрошак» (Женева) были опубликованы материалы, отражающие последствия гамидовской резни армян в Западной Армении и героическую борьбу гайдуков. Среди этих материалов были не только произведения армянских писателей (Ав. Исаакян, Ав. Агаронян, Сиаманто), но и переводы из сочинений русских и зарубежных авторов (М. Горький, А. Чиприани, П. Мериме, Пресансе, Клемансо и др.). Также были опубликованы литературные произведения и аналитические статьи некоторых членов АРФД (Армен Чарг, Мар, К. Микаэлян, Э. Акнуни).

THE LITERARY SECTION OF THE NEWSPAPER “DROSHAK”
(1899–1908)

ARUSYAK ABRAHAMYAN

Summary

Since 1894 the literary section (“Terton”) of the ARF official newspaper “Droshak” (Geneva) has published materials reflecting the consequences of the Hamidian massacres in Western Armenia and the heroic struggle of hayduk groups. These materials were not only the works of Armenian writers (Av. Isahakyan, Av. Aharonyan, Siamanto), but also translations from the works of Russian and foreign authors (M. Gorky, A. Chipriani, P. Merimee, Presanse, Klemanso, etc.). Literary works and analytical articles of some ARFD members (Armen Charg, Mar, K. Mikaelyan, E. Aknuni) were also published in “Terton”.